համաձայնեցված ճարտարապետաշինարարական նախագծերը համապատասխանում են ՃՀԱ-ում նշված դրույթներին ՀՀ օրենսդրությամբ ճարտ-շին. նախագծերի կազմին և բովանդակությանը ներկայացվող պահանջներին համապատասխան:

Արդեն ճարտարապետաշինարարական նախագծերը համաձնեցվում են միայն ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006թ. նոյեմբերի 29-ի N 273 -Ն հրամանի պահանջներին:

10.Պահպանված չէ
կատարողական փաստաթղթերի ցանկը:

Ընդունվել է ի գիտություն և այսուհետ ավարտված շինարարության շահագործման ընդունումը փաստագրվում է միայն կատարողական փաստաթղթերի և տուրքի վճարի մուծումը հավաստող անդորրագրի առկայության դեպքում:

11.Պահպանված չէ
շինարարության շահագործման ակտը ձևակերպելուց հետո 3-օրյա ժամկետում ծանուցվում է համապատասխան մարզպետը(կցվում է շահագործման ակտի պատճենը):

ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգի 25-րդ կետի պահանջները կպահպանվեն և շինարարության շահագործման ակտը ձևակերպելուց հետ 3 օրյա ժամկետում կներկայացվի մարզպետարան:

12.Պահպանված չէ
շինարարության շահագործման ակտը ձևակերպելուց հետո 3-օրյա ժամկետում ծանուցվում է տեսչության տարածքային բաժին (կցվում է շահագործման ակտի պատճենը):

ՀՀ կառավարության 2003թ. մայիսի 8-ի N 626-Ն որոշմամբ սահմանված կարգի 25-րդ կետի պահանջները կպահպանվեն և շինարարության շահագործման ակտը ձևակերպելուց հետ 3 օրյա ժամկետում, կներկայացվի տեսչության տարածքային բաժին:

13.Թերի է պահպանված
շենքերը և շինությունները օգտագործվում են իրենց գործառնական նշանակությանը համապատասխան:

Ընթացքի մեջ է շենքերի և շինությունների օգտագործումը իրենց գործառնական նշանակությունը համապատասխանեցնելու գործընթացը:

14.Պահպանված չէ
թաղումների և գերեզմանատեղերի գրանցամատյանի վարումը և գերեզմանի վկայականի տրամադրումը (ՀՀ կառավարության 2006 թ. նոյեմբերի 26-ի N1910-Ն որոշում հավելված N 1, կետ 9):